

ԲԱՆԱԿԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՈՌԻԶԱՆԱ ՍԱՐՈՒՍԱՆՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՖԻՆԱՆՍԱԲԱՆԿԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՍԱՍՏԱԿԱՈՌԻՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ժամանակակից լեզվաբանությունը հաճախ է անդրադառնում տերմինա-
համակարգերի համեմատական ուսումնասիրությանը տարբեր լեզուներում:
Հնդեվրոպական լեզվաբանության, մասնավորապես հայագիտության բնա-
զավառում շատ բան է արվել լեզուների համեմատական ուսումնասիրության
ասպարեզում: Համեմատական լեզվաբանությունը ուշադրությունը կենտրո-
նացնում է լեզվական միավորների նմանության վրա՝ անտեսելով տարբերու-
թյունները: Այդ բացը լրացնելու համար ուսումնասիրողները այժմ ավելի հա-
ճախ դիմում են զուգադրական մեթոդին, որը ուշադրություն է դարձնում լեզ-
վական միավորների ոչ միայն նմանությանը, այլև տարբերություններին: Տեր-
մինաբանական ենթահամակարգերի համեմատությունը նպատակ ունի ի
հայտ բերել այդ համակարգերի ձևավորման աղբյուրները, որոշել ի՞նչն է սե-
փական, և ի՞նչն է փոխառված:

Եթե մի ժամանակ ուսումնասիրության օբյեկտները հիմնականում գիտա-
կան և հասարակական-քաղաքական տերմիններն էին, ապա վերջին ժամա-
նակներս առավել հետաքրքրական են դարձել գործարարության, ֆինանսա-
բանկային և կառավարման բնագավառների տերմինահամակարգերը:

Սույն հոդվածի նյութը հայերեն և անգլերեն ֆինանսաբանկային տերմին-
ներն են: Արժե նշել, որ հայերեն ֆինանսական և բանկային տերմինները մինչև
այժմ հատուկ ուսումնասիրության նյութ չեն հանդիսացել ո՛չ ինքնուրույն, ո՛չ
էլ զուգադրական տեսանկյունից: Այդ ուղղությամբ մեր կատարած աշխա-
տանքն առաջին փորձն է, որի արդյունքները հրատարակված են «Անգլերեն—
հայերեն բառարան—տեղեկատու. ֆինանսներ և բանկեր» գրքում (Երևան,
2005) և «Անգլերեն—հայերեն, հայերեն—անգլերեն ֆինանսաբանկային բառա-
րան»-ում (Երևան 2009, պրոֆ. Ֆ. Խլղաթյանի համահեղինակությամբ):

Հայերենում առևտրին և ֆինանսական գործին վերաբերող տերմիններ
եղել են նաև անցյալում: Դրանցից մի քանիսի «կենսագրությունը» սկսվում է
մ. թ. 5-րդ դարից: Դրամ (drām) բառը, որով նշանակվում է Հայաստանի Հան-
րապետության դրամական միավորը, փոխառվել է պահլավերենից, սա էլ
վերցրել է հունարենից (δραхма): Դրամ բառը վկայված է Աստվածաշնչում:
Պահլավերենից է փոխառված նաև մուրհակ—ը, որը նշանակել է պարտքի հա-
մար ստորագրված թուղթ (Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան):

Կարելի է բերել այլ օրինակներ նա, ինչպես՝ աճուրդ, առևտուր, արժույթ, ավանդ և այլն: Խորհրդային շրջանում այս բնագավառի տերմինաբանության մեջ գերիշխում էին փոխառությունները, որոնք վերցվում էին ռուսերենից կամ ռուսերենի միջնորդությամբ եվրոպական լեզուներից: Միայն չի լինի ասել, թե մինչև անկախացումը հայերենը վերջնականորեն ձևավորված ֆինանսական և բանկային ինքնուրույն տերմինաբանական համակարգ չունեի: Անցած 10–15 տարիների ընթացքում գործարարության, բանկային գործի ձևավորման ու տարածման գործընթացը հրատապ դարձրեց նման տերմինաբանական համակարգի ձևավորումը: Հրապարակվեց տվյալ բառապաշարին վերաբերող սեփական և թարգմանական բավական ծավալուն գրականություն (Ալֆրեդ Մարշալ, Ջոնոն Ռոբինսոն, Ստիվեն Հրաստեր, Մայքլ Մելվին, Փ. Սամուելսոն, Ու. Նորդհաուս և ուրիշներ): Լույս տեսան տնտեսագիտությանը, դրամագիտությանը, բանկային գործին վերաբերող սեփական և թարգմանական բառարաններ: Այդ ողջ գրականությունը թարգմանվել է հիմնականում անգլերենից կամ ստեղծվել անգլերենի զուգադրությամբ: Մեր ուշադրության կենտրոնում են եղել հատկապես բառարանները, որոնք կոչված են նպաստելու միասնական, ընդհանուր տերմինաբանության մշակմանը և տարածմանը: Անցյալից հայտնի հասկացություններ անվանող տերմինները տարբեր բառարաններում նույն են, իսկ ինչ վերաբերում է նոր մտած հասկացություններին, ապա այս դեպքում կան ոչ միայն տարբերություններ, այլև վրիպումներ: Բերենք մի շարք օրինակներ:

Quota – Կ. Մյուլլերի Անգլերեն–ռուսերեն բառարանում տրված է երեք նշանակությամբ՝ доля, часть, квота: Նույն իմաստներն են նաև Հայերեն–անգլերեն բառարանում: Իսկ որպես հայերեն տերմին, մասնագիտական գրականության մեջ տրված են երեք զուգահեռ ձևեր՝ չափաբաժին (Խ. Ս.), չափամաս (Դ. Ա.), բաժնեչափ (Ա. Ա.): Մեր կարծիքով գերադասելի է առաջինը:

Note – 1. պարտամուրհակ (Խ. Ս., Դ. Ա.), 2. դրամատոմս: Եվ, իրոք, անգլերեն–ռուսերեն բառարանում տրված 17 իմաստներից երկուսն են մեզ հետաքրքրող բառապաշարից՝ расписка (вексель) և банкнот: Մի այլ բառարանում տրված երեք բառերից երկուսը անճիշտ են. ծանուցագիր (ռուս. уведомление) և ծանոթագրություն (ռուս. примечание):

Loan – ի դիմաց առաջարկված է երկու տարբերակ՝ փոխառություն (վարկ դրամի ձևով) (Խ. Ս.) և փոխառություն (Դ. Ս., Ա. Ա.): Հայերեն այս երկու տերմինների տարբերությունը ելակետի մեջ է: Փոխառությունը դրամական միջոցների տալն է (ссуда), իսկ փոխառությունը՝ նույն միջոցները առնելը (заем):

Float – բառի իմաստը կապված է լողալու, ջրի վրա մնալու և, հետևաբար, տատանվելու հետ: Սիս թե ինչու կարծում ենք, որ ճիշտը լողք, տատանում համարժեքներն են (Խ. Ս.), իսկ գործափող–ը, որ տրվում է մի այլ բառարանում (Ա. Ա.), հարմար չէ: Float տերմինը հանդես է գալիս մի շարք կապակցություններում՝ floating interest rate (լողացող տոկոսադրույք), floating rate assets (լողացող տոկոսադրույքով ակտիվներ), floating rate funds (լողացող տոկոսադրույքով պարտատոմսեր), որոնցում հենց լողալու, տատանվելու իմաստն է: Եվ կառավարություններն էլ տարադրամի փոխարժեքները սահմանելիս հաճախ ընդունում են լողացող կուրսը:

Fee տերմինի համար առաջարկված է գանձավճար, վճար (Դ. Ա.), մասնա-

գետի վարձատրություն (Ա. Ա.), որոնցից ոչ մեկը ճշգրիտ չէ: Նախ հասկանալի չէ, թե ի՞նչ գործ ունի գանձը, ոչ էլ դա աշխատավարձ է կամ առևտրի ընթացքում կատարվող վճար: Խոսքը այն դրամամիջոցի մասին է, որ բանկը տալիս է իր աշխատողին իբրև պարգև, հետևաբար ճիշտ համարժեքը կլինի պարգևավճար (ինչպես հոնորար-ը):

Draft տերմինի իրական համարժեքը чек օտարաբանությունն է, որի համար այժմ հաստատված է վճարագիր տերմինը (Խ. Ս.): Տեղին չէ փոխգիր տարբերակը (Ռ. Ա.), որը հավանաբար հեղինակային նորաբանություն է և հաստատված չէ:

Cost տերմինին իբրև համարժեք հայերենում կա երեք գոյական բառ՝ ծախք, արժեք, գին (Խ. Ս., Ա. Ա.) և մեկ բայ արժենալ (Ա. Ա.), որոնք բոլորն էլ ընդունելի են համապատասխան խոսքաշարերում գործածվելու դեպքում:

Client տերմինը հայերենում ունի կայունացած համարժեք՝ հաճախորդ, բայց դրանից բացի վերջերս կազմվել է սպասարկյալ (Ա. Ա.) նորաբանությունը, որն ընդունելություն չի գտել:

Budget ֆրանսերեն փոխառության դիմաց հայերենը համարժեք չունի, ուստի օգտագործվում է փոխառյալը:

Bond տերմինի համար բոլոր բառարանները տալիս են նույն համարժեքը՝ պարտատոմս, որը հայերենում գոյություն ունի վաղուց:

Հայերեն անհրաժեշտ համարժեքի բացակայության դեպքում օգտագործվում են փոխառյալ տերմիններ: Այս դեպքում, բնականաբար, համապատասխանությունը հարյուրտոկոսային է: Նման տերմիններից են բանկ (bank), բանկիր (banker), բանկոմատ (банкомат), աուդիտ (audit), բալանս (balance), կապիտալ (capital), բյուջե (budget), բորսա, վաուչեր և այլն:

Վերջերս սրանց համար պատճենման կամ թարգմանության եղանակով ստեղծվեցին հայերեն համարժեքներ՝ bank – դրամատուն, audit – հաշվեքննություն, balance – հաշվեկշիռ, borsa – սակարան և այլն:

Ուշագրավ է անգլերեն և հայերեն տերմինների հարաբերակցությունը կառուցվածքային տեսանկյունից: Ուսումնասիրությունը ցույց է տալիս երկու լեզուների համապատասխան տերմինների կառուցվածքային բազմազանություն: Ստորև կբերենք մի քանի նման կաղապարներ.

1. անգլերեն՝ պարզ բառ – հայերեն՝ պարզ բառ.
asset – ակտիվ
2. անգլերեն՝ պարզ բառ – հայերեն՝ բարդ բառ: Այս կաղապարը շատ դրսևորումներ ունի, քանի որ հայերեն տերմինների զգալի մասը կազմվել են անգլերեն տարբերակի պատճենմամբ.
bond – պարտատոմս, fee – պարգևավճար, draft – վճարագիր, check – վճարագիր, budget – հաշվեկշիռ, tariff – սակագին, note – պարտամուրհակ, դրամատոմս, quota – չափաբաժին:
3. անգլերեն՝ պարզ բառ – հայերեն՝ ածանցավոր.
cost – ծախք, float – լողք, տատանում, debt – պարտք, client – հաճախորդ:
4. անգլերեն՝ պարզ բառ – հայերեն՝ բարդ ածանցավոր բառ.
loan – փոխառություն, փոխառություն, charge – բռնագանձում:

5. անգլերեն՝ պարզ բառ – հայերեն՝ բառակապակցություն.
cash – կանխիկ դրամ, board – ֆոնդային բորսա, ֆոնդային սակարան:
- Ֆինանսաբանկային տերմինների մեջ գերակշռում են բարդ և բաղադրյալ (բառակապակցական) կաղապարներով կազմվածները:
6. անգլերեն՝ բարդ բառ – հայերեն՝ բարդ բառ.
Prime – times – առաջնաժամկետ:
7. անգլերեն՝ բարդ բառ – հայերեն՝ ածանցավոր.
takeover – կլանում, nonbank – չբանկ:
8. անգլերեն՝ բարդ բառ – հայերեն՝ բառակապակցություն.
cash-book – դրամախաչային գիրք, կանխիկի մատյան,
bylaws – գործելակերպի կանոններ,
overdraft – վարկի գերազանցում,
prime rate – առաջնակարգ տոկոսադրույք,
mortgage – անշարժ գույք, անշարժ գույքի գրավաթուղթ:
9. անգլերեն՝ բարդ բառ – հայերեն՝ բարդածանցավոր
turnover – շրջանառելիություն, bankrupt – սնանկություն, rollover – երկարա-
զգում, checkbook – չեկագրքույկ:
10. անգլերեն՝ բարդածանցավոր – հայերեն՝ բառակապակցություն.
outstanding – չմարված պարտք:
11. անգլերեն՝ բարդածանցավոր – հայերեն՝ բարդածանցավոր.
bankruptcy – սնանկացում:
12. անգլերեն՝ բարդածանցավոր – հայերեն՝ բառակապակցություն.
name – lending – վարկավորում անվան դիմաց:
13. անգլերեն՝ բառակապակցություն – հայերեն՝ բառակապակցություն.
bank holder – պարտատոմսի տեր, ability to pay debts – պարտքերի մարման
կարողություն, accept checks – վճարագրերի ընդունում, access to account –
մուտ դեպի հաշիվը, access to advances – մուտ դեպի վարկերը, consumer
finance company – սպառողական ֆինանսական ընկերություն, direct loan –
ուղղակի վարկ, double entry – կրկնակի մուտքագրում, financial intermediaries
– ֆինանսական միջոցներ, fiscal year – ֆինանսական տարի, forward contract
– կանխակազմ համաձայնագիր, grace period – արտոնյալ ժամկետ, implicit
interest – ներքուստ վճարվող տոկոս, implicit tax – գաղտնի հարկ, joint
account – համատեղ հաշիվ, mutual fund – համատեղ ֆոնդ, operating cost –
գործառնական ծախսեր, skimming pricing – գնորոշում «սերը քաշելու»
միջոցով, soft currency – թույլ (անկայուն) արժույթ, taxable income – հարկա-
դրելի եկամուտ, testamentary trust – կտակների խնամարկություն, watered
stock – «փուլ բաժնետոմս», check «on – us» – չեկ մեզ վրա:
14. անգլերեն՝ բառակապակցություն – հայերեն՝ բարդ բառ.
deposit ticket – ավանդատոմս, deposit slip – ավանդատոմս:
15. անգլերեն՝ բառակապակցություն – հայերեն՝ բարդածանցավոր բառ.
foreign exchange – արտարժույթ, ability to meet payments վճարունակություն:

Այսպիսով՝ անգլերենի և հայերենի ֆինանսաբանկային տերմինները կա-
ռուցվածքային համապատասխանության տեսանկյունից 15 խումբ են կազ-

մում: Ուշագրավ է նաև բաղադրյալ (բառակապակցական) տերմինների կառուցվածքային կաղապարման հարցը (երկանդամ, եռանդամ, բազմանդամ և այլն), որի քննությունը հետազայինն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Դ. Նորդհաուս, Տնտեսագիտություն 1, 1955:
2. Թ. Ավդալբեկյան, Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Երևան, 1964:
3. Հեղ. կոլեկտիվ, Զաղաքատնտեսություն, Երևան, 1990:
4. Ուղեցոյց արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի, պրակ Ա-Դ, Սարսել, 1993-2002:
5. Հ. Աճառյան, Արմատական բառարան հ. 4 Երևան, 1974:
6. Ռ. Սարուխանյան, Օտար և հայկական տնտեսագիտական տերմինների ուսուցման ժամանակ (անգլերեն նյութի հիման վար), «Հայագիտության և զուգադրական լեզվաբանության հարցեր», պրակ Բ, Երևան, 2002:
7. Ֆ. Խլղաթյան, Ռ. Սարուխանյան, Անգլերեն-հայերեն բառարան-տեղեկատու, ֆինանսներ և բանկեր, Երևան, 2005:
8. Ֆ. Խլղաթյան, Ռ. Սարուխանյան, Անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն ֆինանսաբանկային բառարան, Երևան, 2009:
9. Ա. Աղաբեկյան, Անգլերեն-հայերեն բառարան, գործարարություն, տնտեսագիտություն, Երևան, 1998:
10. Փ. Զոլին, Դրամագործություն և դրամամիջոցների բառարան (Peter Colin, Dictionary of banking and finance), հայերեն տարբերակ, Երևան, 2001:
11. Դ. Ավետիսյան, ֆինանսաբանկային բացատրական բառարան, անգլերեն-ռուսերեն-հայերեն, Երևան, 2002:
12. Գ. Կիրակոսյան, Հ. Դուշյան, Ի. Տիգրանյան, Տնտեսագիտական բացատրական բառարան, Երևան, 1999:
13. М. А. Баскакова, Толковый юридический словарь; Бизнес и право, Москва, 1998.
14. Англо—русский словарь коммерческой терминологии, "Европа", 1991.
15. Slovo, Paris, 2003.
16. J. Bremond, A. Geledan, dictionnaire economique et social, Paris, 1981.
17. Мюллер, Англо – русский словарь, Москва.
18. Webster's New World The saurus, New York, 1985 .
19. W. Ryan, P. Norman. Russian Dictionary. English – Russian, Russian – English, Penguin, 1995.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ա. Ա. – Խլղաթյան, Սարուխանյան «Անգլերեն – հայերեն բառարան-տեղեկատու. ֆինանսներ և բանկեր»:
- Ա. Ա. – Ալեքսանդր Աղաբեկյան, Անգլերեն-հայերեն բառարան, Գործարարություն, տնտեսագիտություն:
- Դ. Ա. – Դավիթ Ավետիսյան, ֆինանսաբանկային բացատրական բառարան:

P. САРУХАНЫАН

СТРУКТУРНО-СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ АНГЛИЙСКОЙ И АРМЯНСКОЙ ФИНАНСОВО-БАНКОВСКОЙ ТЕРМИНОЛОГИИ

В постсоветской Армении банковское дело бурно развивалось. До этого, будучи ограниченной правилами советской плановой экономики, самостоятельная банковская и финансовая терминологическая система не была сформирована. В формировании подобной системы важную роль сыграли калькирование, перевод и заимствование английской терминологии. Путем сопоставления английских и армянских финансово-банковских терминов можно выявить 15 структурно-семантических моделей, которым и посвящена данная статья.

R. SARUKHANYAN

SEMANTIC AND STRUCTURAL ANALYSIS OF ENGLISH AND ARMENIAN TERMINOLOGY OF BANKING AND FINANCE

In post-Soviet Armenia the banking and finance sector underwent a rapid growth. Prior to it being trapped by the Soviet planned economy the terminology of banking and finance in Armenian had not been sufficiently developed. Calques, translation, and borrowings are of significant importance in the process of formation of aforementioned terminology. The article focuses on the contrastive analysis of English and Armenian banking and finance terms which allows to reveal fifteen semantic and structural models.